ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ ***12.07.2013 թ.***

Նախագահում էր մարզպետ Ռ. Գրիգորյանը, մասնակցում էին մարզի խորհրդի 92 անդամներից 87-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալներ Ա. Հակոբյանը, Մ. Մանուկյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, մարզի զինկոմներ, իրավապահ մարմինների, գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնի, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և **ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտության, ծրագրավորման և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Արթուր Ադամյանը:**

Օրակարգում՝

1. 2012 թվականի աշնան և 2013 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար մարզի գյուղացիական տնտեսություններին ՀՀ կառավարության կողմից սուբսիդիայով հատկացված դիզելային վառելանյութի, ազոտական պարարտանյութի, հացահատիկի, բազմամյա խոտաբույսերի սերմացուների բաշխման, դրանց արդյունավետ օգտագործման և առաջիկա խնդիրների մասին:
   /Զեկ. Վ. Հովհաննիսյան - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

2. Մարզի համայնքներում զորակոչի անցկացման ընթացքի և առկա խնդիրների մասին:
   /Զեկ. Ի. Ասատրյան - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ/

3. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

Վ. Գևորգյանը - Սարուխան համայնքի ղեկավար
Վ. Հարությունյանը - Գանձակ համայնքի ղեկավար

Հայտարարություններով հանդես եկան մարզպետարանի աշխատակազմի հողօգտագործման և հողաշինարարության բաժնի վարիչ՝ Է. Ստեփանյանը, քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ՝ Հ. Բիձյանը:

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ռ. Գրիգորյանը:

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մեկ շաբաթյա ժամկետում մարզպետարան ներկայացնել համայնքներին բաշխված դիզելային վառելանյութի, ազոտական պարարտանյութի, ինչպես նաև գարու, կորնգանի և առվույտի սերմացուների վերջնական բաշխացուցակը՝ ըստ կառավարության կողմից հաստատված ձևաչափի.
2) ուշադրության կենտրոնում պահել սեփական եկամուտների և գույքի վարձակալությունից եկամուտների հավաքագրման գործընթացը.
3) աշխատանքներ տանել համայնքներում վարչական վերահսկողության արդյունքում արձանագրված թերությունները կարճ ժամկետում շտկելու ուղղությամբ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ